



Ազդարարության Trumpet's Sound **փող**

43-րդ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱԼԻԱ
ԲՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2017



Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԳԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՎ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույուճյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հնագանդություն Հովիվ՝ Հրաչ Գույուճյան

Լսելու ունակությունը Ռեքս Տիրլալ

Երբ Աստված լուում է Դոկտ. Չեյրո Բասսարա

Վերստին ծնունդ Վեր. Ֆրեդ Ֆորսթեր

Սիրո դեղագիրը Քաղված

Եբրայեցիներին ուղղված նամակը (բաժին 2, մաս 3) QMBC պանորամա

Քո առաջին սերը թողուցիր Ընտրված

Հոգևոր տնտեսագիտության դասեր (4) Մանկանց ավետ. ընկ.

Ո՞րն է քո նպատակը Հովիվ՝ Հովսեփ Հովսեփյան

Ինչպե՞ս դիմավորելու ենք քննադատությունները Ընտրված

Հավատք՝ Քրիստոսի հանդեպ, սեր՝ եղբայրների հանդեպ. Վարդան Սարգիսեան

Երիտասարդը և նրա Սուրբ Գիրքը Քաղված

Հնազանդություն

Արդյոք 21-րդ դարում այսպիսի բան գոյություն ունի^օ: Որպես հավատացյալներ եկեք Աստծո Խոսքին ավելի մոտիկից նայենք:

Մեր զավակների սովորած սուրբգրային առաջին համարներից մեկը, անկասկած, Եփես. 6:1-ն է, որ ասում է. «Չավակներ, ձեր ծնողներին հնազանդ եղեք Տիրոջով, որովհետև դա է ճիշտը»: Շատ մարդիկ ակնկալում են, որ զավակները հնազանդություն սովորեն՝ չգիտակցելով, որ հնազանդությունը ոչ միայն երեխաների համար է, այլև բոլոր մարդկանց:

«Հնազանդվել» բառի աստվածաշնչյան բառը հունարեն «հուփաքու» բառից է առաջանում, որ նշանակում է ասված խոսքը ուշադրությամբ լսել այն կատարելու նպատակով: Ընտրություն կատարելու հնարավորություն չկա այստեղ. պատվերը պետք է կատարվի անկախ այն բանից՝ համաձայն ես, թե ոչ:

Աստված հրամայեց հնազանդվել

Բ Օրինաց 6.4-9-ում կարդում ենք. «Լսի՛ր, ով Իսրայել, մեր Տեր Աստվածը մեկ Տեր է. սիրի՛ր քո Տեր Աստծուն ամբողջ սրտովդ, ամբողջ հոգովդ և ամբողջ գործությամբդ: Եվ այս խոսքերը, որ ես այսօր քեզ պատվիրեցի, քո սրտի մեջ լինեն, ջանասիրաբար ուսուցանի՛ր դրանք քո որդիներին, խոսի՛ր դրանց մասին քո տանը նստած ժամանակ և՛ պառելիս, և՛ վեր կենալիս: Եվ դրանք որպես նշան կապիր ձեռքիդ վրա, դրանք թող ճակատնոց լինեն աչքերիդ մեջտեղում: Նաև քո տան դրանդիքի վրա և դռներիդ վրա գրի՛ր դրանք»:

Կող. 3.22-ն ասում է. «Ծառաներ, ամեն բանի մեջ հնազանդ եղեք ձեր մարմնավոր տերերին, ոչ թե առերես ծառայելով՝ մարդահաճոների պես, այլ՝ սրտի անկեղծությամբ և Աստծուց վախենալով»:

Մենք՝ որպես հավատացյալներ, պետք է հնազանդ լինենք Աստծուն և հեղինակություններին:

Ա Թագ. 15.22-ում Սամուելն ասում է. «Մի՞թե Տերն ավելի հաճույք

է ստանում ողջակեզներից ու զոհերից, քան Տիրոջ ձայնին հնազանդելուց: Ահա, հնազանդությունը զոհաբերությունից ավելի լավ է, ու անսալը՝ խոյերի ճարպից»:

Աստված քննում է մեր հնազանդությունը ու դիտում է, թե որքանով ենք հնազանդ Իր Խոսքին:

Հովի. 15.14-ում Հիսուսն ասել է. «Դուք Իմ բարեկամներն եք, եթե անեք այն, ինչ Ես պատվիրում եմ ձեզ»:

Որպես հավատացյալներ ամեն օր պետք է հետևենք Աստծո և Հիսուս Աբրահամի պատվիրաններին՝ առանց որևէ բացառության:

«Որովհետև դուք ազատության եք կանչված, եղբայրներ, միայն թե ձեր ազատությունը մարմնականի համար որպես պատրվակ մի՛ օգտագործեք, այլ սիրով միմյա՛նց ծառայեցեք: Քանի որ ամբողջ օրենքն այս մեկ պատվիրանի մեջ է ամփոփվում. «Դրացուդ քո անձի պես սիրի՛ր»» (Գ.աղ. 5.13-14):

Անհնազանդության պատճառով օրհնության կորուստ

Շատ հավատացյալներ անցյալում, ինչպես նաև մեր օրերում, կորցրել են Աստծո օրհնությունը իրենց անհնազանդության պատճառով:

«Ով յուրաքանչյուրին հատուցելու է իր գործերի համեմատ. հավիտենական կյանք՝ նրանց, ովքեր բարի գործերի մեջ հարատևելով՝ փառք, պատիվ և անմահություն են որոնում, իսկ նրանց, ովքեր հակառակության մեջ են, ճշմարտությանը չեն հնազանդվում, այլ անիրավության ետևից են գնում՝ բարկություն և զայրույթ» (Հռոմ. 2.6-8):

Հնազանդության պարգևները

«Քեզ օրհնելով կօրհնեն, և քո սերունդը երկնքի աստղերի և ծովեզրում եղած ավազի պես բազմացնելով կբազմացնեն, և քո սերունդը կժառանգի իր թշնամիների դուռը. և երկրի բոլոր ազգերը քո զարմով կօրհնվեն, որովհետև Իմ ձայնին հնազանդվեցիր» (Ծննդ. 22.17-18) (Աստված խոսում է Աբրահամի հետ հրեշտակի միջոցով):

Հ. Գ.

Լսելու ունակությունը

Երբեք հանդիպե՞լ է այսպիսի իրավիճակ՝ ընկերներից մեկը ձեզ հետ խոսել է իր խնդրի մասին, իսկ ձեր միտքը նրա խոսելու ընթացքում սկսել է հիշողության ու փորձառության մեջ պրպտել օգտակար մի խորհուրդ կամ մեկնաբանություն: Սակայն չկարողանալով յուրահատուկ և խորաթափանց մի միտք առաջարկել՝ ինքներդ ձեզ անգոր և անընդունակ եք զգացել ձեր ընկերոջ կարիքը բավարարելու հարցում, սակայն ձեր ընկերը ասել է. «Շատ շնորհակալ եմ օգնության համար. հիմա ինձ շատ ավելի լավ եմ զգում»:

Հավանաբար շփոթվել եք. «Ես ի՞նչ օգուտ եմ տվել... հազիվ թե մի բառ եմ ասել»:

Մենք շփոթվում և նույնիսկ զարմանում ենք, երբ ինչ-որ կերպով մեկին օգնած ենք լինում՝ առանց որևէ խոսքի: Մի անգամ ես հրաշալի գիրք կարդացի «Լսող սրտի զարմանահրաշ ուժը» վերնագրով: Մա մի արտահայտություն է, որին կարելի է անդրադառնալ: Այն ինձ հիշեցնում է Հակոբոսի ասած մեկ խոսքը. «Ամեն մեկը լսելու մեջ թող արագաշարժ լինի...» (Հակ. 1:19):

Երբ խոսողի դերում ենք, մեր խոսքերով, գաղափարներով, մտահոգություններով, դատողություններով և կարծիքներով մուտք ենք գործում դիմացինի ներաշխարհ: Երբ լսողի դերում ենք, ապա կարծես թե խոսողին ասում ենք. «Դու հիմա ավելի կարևոր ես, քան օրակարգի ցանկացած կետ: Իմ կարծիքը, իմ մտքերը դնում եմ մի կողմ և իմ ամբողջ ուշադրությունը քեզ եմ տալիս»: Ճշմարիտ լսելը գուրկ է դատասպարտելուց: Այն ոչ մի դեպքում դիմացինին չի ասում, թե ինչպես պետք է նա «զգա» կամ ինչ է «հարկավոր անել»: Լսելու ունակությունը բաց սրտի, ապահով միջավայրի և ընդունելության մթնոլորտ է: Լսելը քրիստոնեական սեր փոխանցելու հզոր միջոց է: Պարզ փաստ է, որ մարդիկ, երբ զգում են, որ իրենց ասածն ինչ-որ մեկը ուշադիր լսում է, ապա իրենք իրենց սիրված և հասկացված են զգում: Քրիստոսի՝ լսելու դասական օրինակներից մեկը տեսնում ենք Էմմատուսի ճանապարհի պատմության մեջ: Քրիստոսը լսեց Իր երկու հետևորդ-

ների հուսահատությունն ու շփոթմունքը. «Հիսուս Ինքը մոտեցավ նրանց և սկսեց քայլել նրանց հետ» (Բուկ. 24:15):

Կարծում եմ՝ ավետարանական քրիստոնյաների մեծ մասը չէր կարող դիմակայել անմիջապես գրույցի բռնվելու գայթակղությանը և սպառիչ պատասխաններ տալուն: Տարօրինակ է՝ Հիսուսը այդպես չվարվեց: Նա հարցեր տվեց և այդ երկու աշակերտներին իրենց շփոթված իրավիճակից դուրս հանեց, լսեց նրանց, երբ իրենց սրտի վիշտն էին կիսում Իր հետ: Միայն լսելուց հետո կարողում ենք, որ Նա, սկսելով Մովսեսից ու բոլոր մարգարեներից, մեկնեց նրանց այն, ինչ Գրքերում գրված էր Իր մասին (Բուկ. 24:27):

Ինձ թվում է, որ մենք ավելի ունակ ենք խոսելու, քան լսելու: Մենք շատ բան ունենք ասելու. ի վերջո, մենք կարծում ենք, որ ունենք մարդկանց բոլոր խնդիրների պատասխանները: Ապրելով մի աշխարհում, ուր յուրաքանչյուր ոք պատասխաններ է փնտրում, պատասխաններ ունեցողի համբավ ունենալը բավականին գրավիչ է թվում: Այնուամենայնիվ, եթե ուզում ենք հետևել Հակոբոսի ուսմունքին և Քրիստոսի օրինակին, ապա պետք է ձեռք բերենք լսելու ունակությունը: Առակաց գրքի իմաստուն հեղինակն ասել է. «Ով պատասխան է տալիս նախքան մի բան լսելը, դա հիմարություն ու ամոթ է իր համար» (Առակ. 18:13):

Եթե երբևէ եղել եք այնպիսի մի անձի հետ, ով պարզապես լսել է ձեզ, ապա կիմանաք, թե ինչ նկատի ունեն: Լսելը հզոր, բժշկող հրմտություն է: Երբ ձախողում ենք դա դրսևորել եկեղեցական կամ ընտանեկան կյանքում, մեր հարաբերությունները տուժում են, և ուրիշներից օգնել կարողանալու մեր ունակությունը խիստ սահմանափակվում է:

Կենտրոնացած, ուշադիր և սրտանց լսելը պահանջում է կարգապահություն և գոհողություն, բայց հզոր միջոց է՝ դիմացիմին ասելու. «Ես հոգ եմ տանում քեզ համար»:

Ռեքս Տիրլավ



Երբ Աստված լուծ է Ամբակում 1:1-13

Աստծո պատասխանը՝ այո:

Աբրահամի ծառան Իսահակի համար կին փնտրելիս աղոթքով Աստծո առաջնորդությունն էր խնդրում: Մովսեսը Կարմիր ծովի առջև աղոթում էր, որ Իսրայելը կարողանա անցնել ու հասնել ցամաքին: Աննան որդի էր խնդրում աղոթքով. արդյունքում ծնվեց Սամուելը: Եղիան Աստծո գործության դրսևորման համար էր աղոթում, և Երկնքից կրակ իջավ:

Աստծո պատասխանը՝ ոչ:

Մովսեսն աղաչում էր Աստծուն, որ իրեն թույլ տա Իր ժողովրդին առաջնորդելու Խոստման Երկիր: Պողոս առաքյալը երեք անգամ աղոթեց, որ այդ «մարմնի խայթը» հեռանա: Նա ստիպված էր մնացած ողջ կյանքում հնարավորինս համակերպվել դրա հետ: Տեր Հիսուսը մի աղոթք արեց, որն այդպես էլ անպատասխան մնաց: Նա աղաղակում էր պարտեզում. «Այս բաժակը անցրո՛ւ ինձանից»: Նա աղոթում էր, որ խաչի վրա մահ չկրի: Փոխարենը ստիպված եղավ կրելու դրա ցավը:

1. Մենք աղոթքը սխալ ենք հասկանում (Հակ. 4:3)

Ճշմարիտ աղոթքը պետք է աստվածակենտրոն լինի: Մենք հաճախ աղոթքը վերածում ենք եսակենտրոն գործողության: Աղոթքի նպատակն այն է, որ Աստված փառավորվի: Մի աստվածաբան ասել է. «Մեր աղոթքները հաճախ Աստծուն հավասարեցնում են մարդու մակարդակին»: Աստվածաշունչը խոստանում է, որ Աստված կլսի մեր աղոթքները, ոչ թե հրամանները:

2. Անհավատությունն արգելափակում է աղոթքը (Հակ. 1:6)

Չպատասխանված աղոթքի մյուս պատճառն այն է, որ աղոթք բարձրացնողը չի հավատում աղոթքին: Այս դեպքում աղոթքը լոկ սին

ծես է, կամ ասվում է պարզապես որպես սնահավատություն: Հաճախ աղոթում են առանց հավատքի կամ հավատալու:

3. Մեղսավորությունն արգելափակում է աղոթքը (Եսայի 59:2, Առակ. 15:29, Մատթ. 5:22)

Մեր մեղքերը մեզ անջրպետում են Աստծուց: Աստծո ձեռքը չի կարճացել, ոչ էլ Նա խլացել է: Փոխարենը մեր մեղքերը պատնեշներ են բարձրացնում, որոնք մեզ դուրս են թողնում Աստծո նպատակից ու ծրագրից: Պատասխանված աղոթքներին նախորդում է մեղքի սրբաբուխ խոստովանությունը, որով պատնեշները տապալվում են, որպեսզի Աստծո պատգամը տեղ հասնի: Աղոթքն ու ներումը շաղկապված են: Ոչ որ չի կարող անհաշտ լինել եղբոր կամ քրոջ հետ, միաժամանակ հաշտ՝ Աստծո հետ:

4. Չպատասխանված աղոթքը հաճախ պատասխանվում է հետազայում (Մադ. 40:1)

Երեմիա 42-րդ գլխում ժողովուրդը մարգարեին խնդրում է խոսել Աստծո հետ և ուղղորդում խնդրել իրենց կյանքի համար: Ժողովուրդը Երեմիային ասաց. «Թող մեր աղաչանքը քո առաջին ընդունելի լինի, և մեզ համար աղոթք արա քո Տեր Աստծուդ այս բոլոր մնացորդի համար, որովհետև շատիցը քիչ ենք մնացել, ինչպես որ աչքդ մեզ տեսնում է: Եվ քո Տեր Աստվածը մեզ իմացնե մեր գնալու ճանապարհը և մեր անելու բանը» (Երեմ. 42:2-3): Երբեմն չպատասխանված աղոթքի պատճառն այն է, որ մեր ժամանակն Աստծո ժամանակը չէ: Եվ այն, ինչ հաճախ մեկնաբանում ենք որպես չպատասխանված աղոթք, պարզապես հետաձգվող պատասխան է:

5. Աստված ամենից լավ գիտի

Հաճախ պայքարում ենք չպատասխանված աղոթքի խնդրի հետ այնպես, կարծես դա բացթողում է Աստծո կողմից: Ինչ էլ որ պատահի մեր աղոթքներում ու մեր ցանկությունների հետ, պետք է միշտ ուշադրության կենտրոնում պահենք այն փաստը, որ Աստված ամենից լավ գիտի (Հռոմ. 8:28):

Դոկտ. Չեսլով Բասսարա
(czeslaw7@eta.pl, www.proword.eu)

Վերստին ծնունդ

Հովհ. 3:1-16

Նիկողեմնուր՝ հրեա մի իշխան, եկավ Տեր Հիսուսի մոտ՝ վերստին ծնունդի մասին հարցեր տալու:

Նախ ուզում եմ հիշել, թե Հիսուսն իրապես ո՞վ էր: Երբ Նիկողեմնուր խոսում էր Հիսուսի հետ, հատուկ բան նշմարեց Նրա մեջ. «Ոչ որ չի կարող անել այն հրաշքները, որ Դու ես անում, եթե Աստված նրա հետ չլինի»: Հիսուսն Աստծուց էր եկել, Աստծո Որդին էր և գիտեր ու ճանաչում էր ամեն անձի: Հիսուսը Նիկողեմնուսին ասաց. «Եթե Ես երկրավոր բաներն ասացի ձեզ, և դուք չեք հավատում, ինչպե՞ս պիտի հավատաք, եթե ձեզ երկնային բաների մասին ասեմ»: 17-րդ համարն ասում է. «Աստված Իր Որդուն չուղարկեց աշխարհ, որ աշխարհը դատի, այլ՝ որ աշխարհը Նրանով փրկվի»: Նա Երկնքից եկավ ու ամենից վեր է: Ինչ տեսավ ու լսեց, դրա մասին է վկայում, քանի որ Նա, ում Աստված է ուղարկել, Աստծո Խոսքն է խոսում: «Ինչ որ գիտենք՝ խոսում ենք, և ինչ որ տեսանք՝ վկայում ենք. և մեր վկայությունը չեք ընդունում»: Ուրեմն պատգամը սա է՝ Հիսուսն Աստծուց է և Աստծո Որդին է: Այսքանը մեզ համար բավարար է, որ Նրա առջև ծունկի գանք, երկրպագենք և Նրա Խոսքը ընդունենք: Աստված՝ մեր ստեղծիչը, Իր Որդու միջոցով խոսեց մեզ հետ:

Հիսուսը Նիկողեմնուսին ասաց, որ եթե մեկը նորից չծնվի Հոգուց, Աստծո թագավորություն չի կարող մտնել: Ուրեմն պայման, ճանապարհ կա և դժբախտաբար շատերն ուզում են ուրիշ միջոցներով կամ ճանապարհներով մտնել Աստծո թագավորություն: Բոլորս հավասար ենք Աստծո առջև և դատապարտված ենք մահվան ու կորստի, եթե վերստին չծնվենք: Նիկողեմնուրը զարմացավ, թե ինչպես ծերացած անձը կարող է նորից ծնվել, սակայն Հիսուսը պատասխանեց, որ պետք է Հոգուց ծնվել: Մարմնից ծնվածը մարմին է, Հոգուց ծնվածը՝ հոգի: Հիսուսը սա նմանեցրեց հովի, որ ուր ուզում է, փչում է, դրա ձայնը լսում ես, բայց չգիտես, թե որտեղից է գալիս. միայն գիտես, թե ինչ հետևանք և ազդեցություն է թողնում, երբ փչում է ու անցնում:

Նույնպես երբ վերստին ծնվում ենք Հոգուց, մեր կյանքը նոր ազդեցություն է ունենում: Երբ ծնվում ենք Հոգուց, Աստծո հանդեպ փափագ է արթնանում մեր մեջ, փոխվում ենք և մեր կյանքով աստվածային ազդեցություն ենք թողնում ուրիշների վրա: Եվ վերջապես, այս բոլորը իրականություն են դառնում, երբ Աստված Իր սրտով հայտնվում է մեզ: Ամենագետ Աստված երբեք չէր մտածել մեզ հանդիմանել կամ պախարակել, հապա Նա այնպես սիրեց աշխարհը, որ Իր միածին Որդուն տվեց: Նա խոնարհվեց և համաձայնվեց վիշտ ու ցավ կրել, մարդկանցից մերժվել, միայնակ մեռնել ամենավատ կերպով, նույնիսկ խաչի վրա աղաղակեց Իր Հորը. «Աստված իմ, Աստված իմ, ինչո՞ւ ինձ քեցիր»: Աստված, որ այսքա՞ն գիտի մեր մասին, այսքա՞ն սիրում է մեզ, ես էլ այդքա՞ն հավատում եմ:

Հիշում եմ, երբ փոքր էի, հայրս հեռախոսակապ հաստատող գրասենյակի պատասխանատուն էր: Երբ այցելում էի նրան, հիանում էի՝ նայելով էլեկտրական գործիքներին ու լարերին: Հայրս զգուշացնում էր ինձ, որ չնոտենամ վտանագավոր լարերին: Հավատում էի և հնազանդվում նրան: Ծնողներս սովորեցնում էին ինձ, հաճախ նկատողություն անում, սակայն գիտեի, որ իմ բարիքի համար են անում: Նրանց հոգատարությունը և սերը այնպես էի վայելել, որ նրանց և իմ միջև սիրո հարաբերություն, հաղորդակցություն կար: Հորս լավ գիտեի և դրա համար հնազանդ էի. հավատում էի, որ լավագույնն է ուզում ինձ համար: Որքա՞ն ավելի մեր Երկնավոր Հայրն է մեզ սիրում, որ Իր Որդուն ուղարկեց, որ գիտի թե՛ երկնքի, թե՛ երկրի բաները: Նա գիտի մեր սիրտը, մեր խորհուրդները, մեր կարիքները, մանավանդ մեր հավիտենական կարիքը և խոսում է մեզ հետ Իր Որդու միջոցով՝ ասելով այն խոսքերը, որոնք լսելու կարիքն ունենք, որ ունենանք նոր ծնունդ Հոգով, ապաշխարությունով, Աստծո առջև խոնարհվելով, մեղքերը խոստովանելով և Իր՝ մեզ համար արածին հավատալով, մեր սրտերը բացելով, Իրեն հանձնվելով, այո ասելով, որպեսզի կարողանանք մտնել Նրա մեծ թագավորությունը:

Վեր. Ֆրեդ Ֆորսթրը

Քաղված՝ «Հատընտիր հոգևոր պատգամներ» գրքից

Սիրո դեղագիրը

Երկար տարիներ առաջ Չինաստանում Լիլի անունով մի աղջիկ ամուսնացավ և ստիպված եղավ սկեսրոջ հետ ապրելու: Կարճ ժամանակի ընթացքում հայտնի եղավ, որ շատ դժվար էր նույն տան մեջ համերաշխ ապրել, որովհետև հարս ու սկեսուր շատ տարբեր անձնավորություններ էին: Լիլին բարկանում էր սկեսրոջ բազմաթիվ սովորություններից: Տարեց կինը միշտ քննադատում էր երիտասարդ հարսին:

Օրեր, շաբաթներ անցան: Կռիվն ու վիճաբանությունը անպակաս էին տան մեջ: Պարագան ավելի վատ դարձավ, քանի որ ըստ չինական հին սովորության՝ հարսը միշտ պետք է հնազանդվեր սկեսրոջը՝ նրա կամքը կատարելով:

Վերջապես Լիլին չկարողացավ դիմանալ և որոշեց դիմել հոր բարեկամին՝ պարոն Հուանկին, որ բույսեր էր վաճառում: Նա բացատրեց իր պարագան և խնդրեց թույն գնել այս հարցը վերջնականապես լուծելու համար:

Պարոն Հուանկը մի պահ մտածեց և վերջապես ասաց.

- Լիլի՛, կօգնեմ քեզ, որ հարցդ լուծես, բայց պետք է ինձ լսես և պատվերս կատարես:

Այա իմաստուն բուսագետը ծրար հանձնեց հարսին և բացատրեց՝ ասելով.

- Ամեն օր պետք է համով ճաշ պատրաստես և սկեսրոջդ պնակի մեջ այս թույնից քիչ-քիչ դնես, որ նրա մարմնում տեղավորվի: Կասկածի տեղիք չտալու համար շատ զգույշ եղիր և սիրով վարվիր նրա հետ, առանց վիճելու: Հնազանդ եղիր և թագուհու պես հարգիր նրան, մինչև որ թույնը նրան սպանի:

Լիլին ուրախությամբ վերցրեց բույսերի ծրարը և տուն փութաց՝ գործադրելու սկեսրոջը սպանելու դավադրանքը:

Շարաքներ և ամիսներ անցան: Ամեն օր Լիլին հատուկ ճաշեր էր մատուցում սկեսրոջը: Նա հիշեց պարոն Հուանկի՝ կասկածելի չլինելու պատվերը, զսպեց իր բարկությունը ու հնազանդվեց սկեսրոջը՝ նրա հետ իր մոր պես վարվելով:

Վեց ամիս անցնելուց հետո տան ամբողջ մթնոլորտը փոխվեց: Լիլին այնքան լավ սովորեց զսպել ինքն իրեն, որ երբեք վիճաբանություն չէր լինում տան մեջ, այլ միայն քաղցրություն:

Սկեսրոջ վերաբերմունքն էլ փոխվեց հարսի հանդեպ և սկսեց իր աղջկա պես սիրել Լիլին: Նա իր բարեկամներին ասում էր, թե իր հարսը լավագույնն է: Նրանք իրար վերաբերվում էին ինչպես մայր ու աղջիկ: Լիլիի ամուսինը շատ ուրախ էր՝ պատահածը տեսնելով:

Մի օր Լիլին նորից գնաց բուսագետի մոտ և խնդրեց, որ կատեցնի թույնի ազդեցությունը, քանի որ սկեսուր մայրն այնքան ազնիվ էր դարձել, որ սկսել է նրան մոր պես սիրել և էլ չի ուզում, որ թույնի պատճառով մահանա:

Տիար Հուանկը ժպիտով գլուխը շարժեց և ասաց.

- Լիլի՛, մտաւորապէս բան չկա: Ես քեզ երբեք թույն չեմ տվել: Այս բույսերը վիտամիններ են, որոնք բարելավելու են նրա առողջությունը: Միակ թույնը քո մտքի և վարմունքի մեջ է: Սակայն այդ բոլորը չեզոքացան այն սիրով, որ դու ցույց տվեցիր սկեսրոջը:

Արդյոք ուշադրություն դարձրե՞լ ես՝ ինչպես որ ուրիշներին ես վերաբերվում, նույն ձևով նրանք քեզ են վերաբերվում: Չինական իմաստուն խոսք կա, որ ասում է. «Այն անձը, որ սիրում է ուրիշներին, փոխադարձաբար սիրվելու է»: Միգուցե Աստված ուզում է քո միջոցով ուրիշի կյանքը փոխել:

Պողոս առաքյալն այսպես է հորդորում մեզ. «Թո՛ղ սերն առանց կեղծավորության լինի: Ատի՛ր այն, ինչ չար է: Կռռչի՛ր բարուն: Իրար հանդեպ գթալից եղեք եղբայրական սիրով և պատվելիս միմյանց տվեք գերապատվությունը: Գործի մեջ ծույլ մի՛ լինեք, հոգով ջերմեռանդ եղեք, Տիրո՛ջը ծառայեցե՛ք: Հույսով ուրախ եղեք, նեղությանը համբերե՛ք, աղոթքների մեջ հարատևե՛ք» (Հռոմ. 12.9-12):

Քաղված՝ «Բարեպտուղ ձիթենին» գրքից

Եբրայեցիներին ուղղված նամակ (բաժին 2, մաս 3)

Այնուհետև մեզ հիշեցվում է Մովսեսի ծնողների մասին, որոնք հավատով հրաժարվեցին երեխային Եգիպտոսի իշխանություններից հանձնելուց: Մենք արդեն տեսանք, թե ինչպես էր Աստված ամեն բան վերահսկում: Մովսեսը քառասուն տարի ապրեց փարավոնի պալատում և ճանաչվեց որպես փարավոնի դստեր որդի: Քառասուն տարեկան հասակում նա հրաժարվեց Եգիպտոսից և նրա փառքից: Քառասուն տարի անց նա կրկին վերադարձավ Եգիպտոս՝ ստրկացած իսրայելացիներին դուրս բերելու և դեպի Ավետյաց երկիրը տանելու համար: Նա հաստատական էր: «Քրիստոսի նախատիմքն ավելի մեծ հարստություն համարելով, քան Եգիպտոսի գանձերը, որովհետև վարձատրությանն էր սպասում: Հավատով նա Եգիպտոսը թողեց, չվախենալով թագավորի բարկությունից, անտեսանելուն տեսնողի պես համբերեց» (Եբր. 11:26-27): Հավատով կատարեց Չատիկը և արյան սրսկումը, և հավատով անցան Կարմիր ծովը:

Քառասուն տարի անց Հեսուն իսրայելացիներին հավատով առաջնորդեց դեպի Քանանի երկիր՝ նվաճելով Երիթով քաղաքը ու փրկելով Ռախաբին ու Նրա ընտանիքին: Այնուհետև կարդում ենք շատ մարդկանց մասին, ովքեր «հավատով թագավորությունների հաղթեցին, արդարություն գործեցին, խոստումները ստացան» (Եբր. 11:33): Ուրիշ մարդիկ էլ կան՝ Հուդայի և Իսրայելի թագավորներ, մարգարեներ և կանայք, ովքեր, չնայած որ «պարտություն» կրեցին, բայց իրականում հավատի միջոցով հաղթողներ եղան: Նրանք դիմանում էին տառապանքին, «որպեսզի ավելի լավ հարության հասնեն» (Եբր. 11:35):

Հինկտակարանյան այս բոլոր հավատացյալները անմիջապես չըստացան այն, ինչ խոստացված էր իրենց, քանի որ Քրիստոսը դեռ չէր եկել իրենց մեղքերը հավիտենապես հեռացնելու և իրենց խիղճը մաքրելու: Սակայն խաչվելուց, մեռելներից հարություն առնելուց և փառավորվելուց հետո Նա կատարելագործեց բոլոր այն արդարների

հոգիները, ովքեր մահացել էին: Մի օր Նա նրանց փառավորյալ մարմիններ է հագցնելու, երբ կրկին վերադառնա նրանց և բոլոր հավատացյալների համար (Եբր. 11:40, 12:23, Ա Կորնթ. 15:52-53):

5. Հարատևելու երկրորդ կոչը և վեցերորդ զգուշացումը (12:1-29)

Հաշվի առնելով նախորդ գլխում նշված մարդկանց հարատևությունը՝ հեղինակը հորդորում է եբրայեցի քրիստոնյաներին, որ դեմ նետեն այն ամենը, ինչը խոչընդոտում է իրենց հոգևոր կյանքին, համբերատարությամբ վազեն իրենց առջև դրված մրցավազքը և իրենց աչքերը ուղղեն դեպի Տեր Հիսուսը: Նա հավատի մեր գերագույն օրինակն է. Նա թողեց Երկնքի փառքը և մարդ դարձավ, որպեսզի Իր կյանքը տա մեր մեղքերի համար: Նա դա արեց և մեռելներից հարություն առավ, Երկինք համբարձվեց և ստացավ այն փառքը, որ նախկինում ուներ: Այս հիասքանչ գործը կատարելով՝ Նա երբեք չէր մտածում հանձնվելու և թուլանալու մասին, քանի որ միշտ մտածում էր Աստծո կամքը կատարելու և դրանից բխող ուրախության մասին: Այսպիսով, հեղինակը գրում է. «Մտաբերե՛ք Նրան, որ Իր դեմ մեղավորների այդպիսի հակառակությունը կրեց, որպեսզի չլինի թե հոգնե՛ք և ձեր սրտում հուսալքվե՛ք» (Եբր. 12:3):

Քրիստոսի տառապանքներն ու մահը իրական իմաստ ունեն և հանգեցրին փառքի և օրհնության: Նմանապես՝ եբրայեցի քրիստոնյաների համեմատաբար թեթև տառապանքները (նրանք արյուն թափելու չափ դիմադրություն ցույց չտվեցին) նույնպես նշանակություն ունեն, ինչպիսիք են՝ սովորելը, մաքրվելը, երբեմն էլ հանդիմանվելը: Սակայն այդ չարչարանքները չպետք է դրդեին նրանց երկմտելու կամ հրաժարվելու, իսկ ծայրահեղության դեպքում՝ հուղայականության վերադառնալու: Նման բաներից տառապողները պետք է հիշեն, որ «Ում Տերը սիրում է, խրատում և ծեծում է ամեն մի զավակի, ում ընդունում է» (Եբր. 12:6): Նաև «Որովհետև նրանք (ծնողները) իրապես մի քանի օրվա համար են մեզ խրատում՝ իրենց լավագույն համարած ձևով, իսկ Նա՝ (Աստված) մեր բարիքի համար, որպեսզի Իր սրբությանը հաղորդակից դառնանք» (Եբր. 12:10): Ինչպես որ Տեր Հիսուսը միշտ ձգտում էր Իր առջև դրված ուրախությանը, նույնպես և մենք պետք է հիշենք, որ կարգապահությունը «նույն պահին ուրախությամբ չի ընդունվում, այլ տրտմությամբ. սակայն հետագայում

նրանով կրթվածներին արդարության խաղաղարար պտուղն է տալիս» (Եբր. 12:11):

Քրիստոնյաները հորդորվում են՝ հետևելու խաղաղությանը և սրբությանը: Այս սրբությունը ճշմարիտ քրիստոնյայի նշանն է, մեկի, ով զատված է աշխարհից Աստծո ծառայության համար: Առանց այս նշանի իրական դարձ չի կարող լինել, հետևաբար Տիրոջը տեսնելու կամ հանդիպելու ոչ մի հեռանկար չի կարող լինել: Բացի այդ, նրանք պետք է զգույշ լինեն, որ Աստծո շնորհից ետ չմնան և թույլ չտան, որ դառնության արմատ բուսնի, և խնդիրներ առաջանան ու շատերը դրանով պղծվեն: Նրանք չպետք է առնչություն ունենան շնության կամ անաստվածության հետ: Եսավը օրինակ է, ով Աստծո կողմից իրեն տրված ժառանգության իրավունքները արհամարհեց՝ այն փոխանակելով մի ափսե ապուրի հետ: Երբ ավելի ուշ նա ցանկացավ ժառանգել օրհնությունը, գտավ, որ այն այլևս իրեն հասանելի չէ (Եբր. 12:14-17, Եբր. 6:4-6):

Երբ Հին Կտակարանում Տերը Սինա լեռան վրա իջավ, իսրայելացիները սարսափով լցվեցին: Եթե մարդ կամ կենդանի դիպչեր լեռանը, պետք է անպայման մահապատժի ենթարկվեր: Որոտներ և կայծակներ էին լինում, մի թանձր ամպ կար լեռան վրա և փողի ուժգին ձայն: Նույնիսկ Մովսեսն ասաց. «Չարհուրում եմ ու դողում» (Եբր. 12:21): Սակայն Նոր Կտակարանում որքա՛ն տարբեր է ամեն բան: Սարսափի փոխարեն քրիստոնյաները լի են ուրախությամբ: Երկրային լեռան փոխարեն, որին արգելված էր դիպչել, քրիստոնյաները ազատ մուտքի իրավունք ունեն դեպի երկնային լեռը՝ Սիոնը: Հրեշտակները, եկեղեցին և Հին Կտակարանի հավատացյալները այնտեղ են, սակայն ամենից առավել Աստված է այնտեղ: Եվ այսպիսով, Հիսուսը Նոր Ուխտի միջնորդն է (Եբր. 12:24): Աբելի արյունը վրեժխնդրություն է պահանջում, բայց Քրիստոսի արյունը խաղաղություն է բերում:

Նորից շոշափվում է Նոր Ուխտի գերազանցությունը Հին Ուխտի նկատմամբ: Հեղինակը մեկ այլ նախազգուշացում է տալիս. «Չզուշացե՛ք, չլինի թե մերժե՛ք Նրան, որ խոսում է» (Եբր. 12:25): Մենք տեսանք, թե ինչպես Աստված հին օրերում պատժեց Իր ժողովրդին, երբ անհնազանդ գտնվեցին Իրեն: Սակայն մենք շատ ավելի տեղեկաց-

ված ենք, քան նրանք էին, հետևաբար Աստծուն շատ ավելի պատասխանատու ենք, քան նրանք: Ուստի ավելի խիստ պատժի կարժանանք, եթե չհնազանդվենք Իրեն: Նախկինում Աստված շարժեց Սինայ լեռը, բայց գալու է մի օր, երբ Նա կշարժի ոչ միայն երկիրը, այլ նաև երկինքը, և վերջ կդնի ներկա ստեղծագործությանը (տե՛ս ԲՊեռ. 3:10):

Որքա՛ն կարևոր է վստահ լինել, որ պատկանում ենք հավերժական թագավորությանը, որն անասան է: Այնուհետև մեզ հորդորվում է. «Եկե՛ք շնորհ ունենանք, որով ընդունելի ձևով ծառայենք Աստծուն՝ ակնածությամբ և աստվածային երկյուղածությամբ, որովհետև մեր Աստվածը սպառող կրակ է» (Եբր. 12:28-29, Ա Կորնթ. 3:12-15):

6. Գործնական ուղեցույցներ և ամփոփում (13:1-25)

Քրիստոնյաները պետք է շարունակեն սիրել միմյանց և հյուրասիրել օտարներին: Նրանք նաև պետք է հիշեն բանտարկյալներին և նրանց, ում վատ են վերաբերվում: Ամուսնությունը պետք է ամենայն պատվի արժանացնեն, սակայն Աստված դատելու է նրանց, ովքեր սեռական հարաբերություններ են ունենում ամուսնությունից դուրս:

Քանի որ դրամասիրությունը բոլոր չարիքների արմատն է (Ա Տիմ. 6:10), քրիստոնյաները պետք է իրենց անձերը հեռու պահեն դրամասիրությունից: Նրանք պետք է գոհ լինեն իրենց ունեցածով՝ հիշելով, որ Աստված չի թողնելու իրենց:

Հեղինակն ասում է. «Հիշեցե՛ք ձեր առաջնորդներին, որոնք Աստծո հոսքը բերեցին ձեզ» (Եբր. 13:7): Նրանք մահացել են կամ հնարավոր է, նահատակվել են Քրիստոսի անվան համար: Քրիստոնյաները պետք է մտածեն իրենց կյանքի մասին և ընդօրինակեն իրենց առաջնորդների հավատը: Այս նահատակները Հիսուս Քրիստոսին իրենց կյանքի նպատակն ու իրենց հավատի առարկան էին դարձրել:

Երբայեցի քրիստոնյաները նորից նախազգուշացվում են տարօրինակ ուսմունքների չհետևել: Հեղինակը հորդորում է հնազանդել առաջնորդներին, քանի որ դա նրանց ուրախություն է պարգևելու, ոչ թե տրտունջ (Եբր. 13:17): Հետո հեղինակը աղոթք է խնդրում իր և իր հետ եղողների համար:

(Շարունակելի)

Քո առաջին սերը թողուցիր Հայտ. 2:4

Եփեստան այդ ժամանակ հռոմեական նահանգի մայրաքաղաքն էր: Այնտեղ էր Արտեմիս կամ Անահիտ չաստվածուհու մեհյանը, որ կառուցվել էր 220 տարվա մեջ և համարվում էր աշխարհի յոթ հրաշալիքներից մեկը:

Պողոս առաքյալն այստեղ հիմնեց մի եկեղեցի, որտեղ ծառայեցին Ակյուղասը, Պրիսկիլան, Տիմոթեոսը և Հովհաննես առաքյալը: Ասում են, որ Հովհաննեսն իր կյանքի վերջին մասն այնտեղ է անցկացրել և այնտեղ է գրել իր Ավետարանը: Նա Պատմոս կղզուց Եփեսոս վերադարձել էր և այնտեղ մահացել 94 տարեկանում՝ ըստ պատմիչների: Առաքյալը սեր էր քարոզում այնտեղ: Երբ շատ էր ծերացել և չէր կարողանում երկար քարոզներ տալ, ժողովրդին ասում էր. «Որդյակներ, իրար սիրեք»:

Ավելին՝ Հիսուսն Ինքը ներկա էր այս եկեղեցում ու հովիվն Իր աջ ձեռքում էր (Հայտ. 1:20): Նա ներկա էր Եփեսոսի եկեղեցում ու գիտեր նրա առավելություններն ու թերությունները: Նա նրան քաջալերում էր՝ ասելով. «Գիտեմ քո գործերը և քո աշխատությունը ու քո համբերությունը, և, որ չարերին չես կարող տանել և փորձել ես նրանց, ովքեր ասում են, թե իրենք առաքյալ են, բայց չեն, և գտել ես, որ ստախոս են և համբերել ես, նեղություններ ես կրել և Իմ անվան համար աշխատել և չես թուլացել» (Հայտ. 2:2-3): Ինչ օրհնյալ եկեղեցի էր. երանի՜ նրա անդամներին, որ Տեր Հիսուսից այսպիսի վկայություն ունեն: Բայց ավա՛ղ: Երանի՜ թե Հիսուսն այստեղ վերջակետ դներ: Նա շարունակում է՝ ցավը սրտին, ուզում է սքափեցնել նրանց՝ մատը դնելով նրա վերքին. «Սակայն քո դեմ մի բան ունեմ՝ քո առաջին սերը թողեցիր» (Հայտ. 2:4): Շատ բաներ ունես, բայց սեր չունես: Մարդկանց ու հրեշտակների լեզուներ ունես, լեռներ տեղափոխող հավատք ունես, բայց սեր չունես, ոչինչ ես: «Եվ եթե... սեր չունենամ, ոչինչ եմ» (Ա Կորնթ. 13:2):

Եփեսոսի եկեղեցին Ա Կորնթ. 13-րդ գլխում հիշված սերն ուներ, իսկ հիմա չունի, թողել է: Ուզելո՞վ, իմանալո՞վ, թերևս անզգուշաբա՞ր: Սերը երկայնամիտ է. սեր չկա, երկայնամտություն չկա քաղցրություն չկա, նախանձ կա, գոռոզություն և հպարտություն, անվայել վարմունք, իրենը փնտրել...: Սարսափելի վիճակ: Խեղճ եկեղեցի, առաջին սերդ թողնելով մակերեսային վիճակ ես ստացել. առաջին սերդ թողեցիր, ընկար: Աստված սեր է: Եթե սեր չունես, Աստված չունես, եթե Աստված չունես, ոչինչ չունես, ոչինչ էս:

Առաջին սերը վերստանալու համար, Տեր Հիսուսը երեք բան է թելադրում Եփեսոսի եկեղեցուն.

1. «Հիշի՛ր, թե որտեղից ընկար». խորհի՛ր վիճակիդ մասին և գիտակցի՛ր, որ ընկած ես:
2. Ապաշխարի՛ր, դարձի՛ր առաջին սիրուդ:
3. «Վերադարձի՛ր քո սկզբնական գործերին», ապաշխարության պտուղ բեր, «եթե ոչ, շուտով Ես կգամ քեզ մոտ ու քո աշտանակը կվերցնեմ իր տեղից» (Հայտ. 2:5): Աստված Իր խոստումներն ու զգուշացումները անպայման կատարում է: Ինչպես երևում է, Եփեսոսի եկեղեցին իր առաջին սերը չկարողացավ գտնել, ընկած մնաց: Հիմա այն չաստվածների քաղաքի տեղը ավերակ ու անապատ է, և այն նավահանգիստը, որտեղ նավով գալիս էին Պողոս և Հովհաննես առաքյալները, ճահիճ է:

Ի՞նչ մեծ ցավ է Տեր Հիսուսի սրտին: Նա աղաղակում է առաջին սերը թողած եկեղեցիներին ու ասում. «Նա, ով ականջ ունի, թո՛ղ լսի, թե Հոգին եկեղեցիներին ինչ է ասում»՝ քեզ և ինձ: Հիսուսի կոչը լսելով հաղթողներին խոստումներ կան՝ երկրորդ մահից չվնասվելու, ճերմակ հանդերձ հագնելու, Աստծո տաճարում սյուն լինելու, Աստծո աթոռին նստելու, Կենաց պսակը ստանալու, պահված մանանայից ու Կենաց ծառից ուտելու:

Անսուտ են այս խոստումները սիրո մեջ մնալով հաղթող եկեղեցիների, քեզ և ինձ համար:

Ընտրված

Հոգևոր տնտեսագիտության դասեր մանուկների և պատանիների հետ աշխատողների համար (4)

«Եվ այն բաները, որ հնձնից լսեցիր շատ վկաներով, նույնն ավանդի՛ր հավատարիմ մարդկանց, որոնք կարողանան ուրիշներին էլ սովորեցնել» (Բ Տիմ. 2:2):

Տեր Հիսուսն Իր օրինակով մեզ ցույց է տալիս, որ պետք է նախևառաջ մեզ ներդնենք ՄԱՐԴԿԱՆՑ մեջ: Պողոս առաքյալն ընթանում էր Տիրոջ հետքերով և իր ժամանակի ու գործի մեծ մասը ներդնում էր նրանց մեջ, ում կրթում ու պատրաստում էր ապագա ծառայության համար, հատկապես երիտասարդների: Վառ օրինակ է այն, որ Պողոսը շատ ժամանակ էր անցկացնում ու ջանքեր գործադրում երիտասարդ Տիմոթեոսի հետ: Նա իրապես իրեն ներդնում էր այդ երիտասարդի մեջ: Նա Տիմոթեոսին առաջարկեց միանալ իր «ծառայության թիմին» ու ամեն բան արեց ծառայության մեջ նրան զարգացնելու համար: Տիմոթեոսին իր հետ տանում էր միսիոներական ճամփորդությունների (Գործք 16:3) ու ցույց տալիս իր մեթոդներն ու մոտեցումը:

Նրան պատասխանատվություն հանձնեց: Հատուկ հանձնարարությամբ ու միսիայով ուղարկեց Թեսաղոնիկե (Ա Թես. 3:2, 6), Կորնթոս (Ա Կորնթ. 4:17) ու Եփեսոս (Ա Տիմ. 1:3): Նրան ուղղորդման ու քաջալերման երկու երկար նամակ գրեց (Ա Տիմոթեոս և Բ Տիմոթեոս): Նրան քաջալերում էր, որ իրեն ներդնի ուրիշների մեջ: Տիմոթեոսի արդյունավետությունը քրիստոնեական ծառայության մեջ համագոր էր նրա մեջ Պողոսի ներդրմանը:

Քրիստոնեական արդյունավետ ծառայությունն էստաֆետայի պես է: Աստված մեզ կանչել ու օրհնել է: Մեր ձեռքերում է «փայտը», որ Նա տվել է մեզ: Բայց չպետք է դա միայն մեզ պահենք: Պողոսն այս էստաֆետայում առաջին վագոններից մեկն էր: Նա իրեն ներդրեց Տիմոթեոսի մեջ ու փայտը հանձնեց նրան՝ գերազույն նպատակով

քաջալերելով դա ավանդել հավատարիմ մարդկանց, որ նրանք էլ շարունակեն փոխանցել ու ներդնել ուրիշների մեջ: Այսպես էստաֆետան շարունակվում է:

Ես ու դու պետք է Աստծուն խնդրենք, որ մեզ առաջնորդի այն մարդկանց մոտ, ում մեջ պետք է ներդնենք մեր ժամանակը, մեր գումարը, աշխատանքն ու ինքներս մեզ: Այսպես Տեր Հիսուսի ու Պողոսի պես կարող ենք մեր ծառայությունը բազմացնել ու կառուցել ապագայի համար: Դրա համար էլ շատ կարևոր է նրանց համար, ում Աստված կանչել է երեխաների ծառայության մեջ, իրենց ներդնել նաև ուսուցիչներին կրթելու մեջ, որ վերջինները հասնեն երեխաներին:

Ներդրում նշանակում է ոչ թե ծախսել ներկա կարիքների վրա, այլ տալ ապագա հասույթ ապահովելու համար: Մեզ վրա ծախսելու փոխարեն ներդնում ենք ուրիշների վրա:

Երեխաները մեր ապագան են: Երբ մեր ժամանակն անցկացնում ու աշխատում ենք նրանց հետ, մեր ֆինանսներն ուղղում նրանց օգնելու համար և մեզ հեղում նրանց մեջ, ԿԱՌՈՒՅՈՒՄ ԵՆՔ ԱՊԱԳԱՆ: Դա է ներդրումը:

Մանկանց ավետարանչության ընկերակցություն

Ո՞րն է քո նպատակը

Փիլիպ. 3:7-21

Մարդիկ, այդ թվում նաև դավանող շատ քրիստոնյաներ, ավելի շատ մտազբաղ են իրենց ներկայով ու առօրյա գործերով, քան ապագայով, հատկապես՝ հոգևոր բաներով և հավիտենական կյանքով: Նրանք բավարարված են, որ ընդհանուր առմամբ գիտելիքներ ունեն Հիսուս Քրիստոսի մասին և պարբերաբար եկեղեցի են գնում: Ներկան ավելի կարևոր ու հուզիչ է թվում. այն այստեղ է, շոշափելի, իսկ ապագան շատ հեռու է: Չմոռանաք, որ յուրաքանչյուր այսօրվան նախորդել է երեկը և հաջորդելու է վաղը՝ անկախ նրանից՝ այն

կյանք կրերի, թե մահ: Մահն այն դուռն է, որով մարդը մտնում է իր հավիտենական ապագան:

«Եվ սրանք կզան հավիտենական տանջանքը, իսկ արդարները՝ հավիտենական կյանքը» (Մատթ. 25.46):

Եթե մեկն ուզում է բժիշկ դառնալ, ապա նա պետք է սովորի, բավականաչափ գիտելիքներ ձեռք բերի և կիրառի. նա չի կարող այդ մասնագիտության մասին ընդամենը որոշ գիտելիքներ ունենալ: Սա կյանքի ընդհանուր սկզբունք է: Այդ դեպքում ինչպե՞ս կարող ենք մենք՝ քրիստոնյաներս, բավարարվել Քրիստոսի մասին ընդամենը մի քանի ընդհանուր գիտելիք ունենալով և որոշ հոգևոր պարտականություններ կատարելով՝ առանց նպատակ ունենալու:

Պողոս առաքյալն ուզում էր ավելին իմանալ Քրիստոսի մասին և «հասնել մեռելների հարությանը» (Փիլիպ. 3.11): Նա կյանքի կարևորագույն նպատակ ուներ. ինչ գնով էլ լինի Աստծո թագավորության մեջ հավիտենական կյանք ունենալ:

Աստվածաշնչյան այս հատվածում Պողոսը դեռևս չէր հասել իր նպատակին, բայց դա ընթացքի մեջ էր: Նա քրիստոնյաների ջանքերը համեմատում էր մարաթոնյան մրցավազքի հետ. կա մեկնարկային կետ, կա վազբուդի, նպատակ և ի վերջո՝ մրցավար: Վազորդը չի ուզում շեղվել որևէ բանով. նա աչքերը հառել է նպատակակետին: Վազորդին չպետք է խանգարեն ո՛չ անցյալը, ո՛չ ինչ-որ գործողություններ:

«Ուստի մենք էլ, որ վկաների այսքան բազմություն ունենք մեզ շրջապատած, դեն գցենք ամեն ծանրություն ու մեզ հեշտությամբ պաշարող մեղքը և համբերությամբ վազենք մեր առջև դրած ասպարեզի ընթացքը» (Եբր. 12.1):

Գու չես կարող վազել, եթե չիմանաս, թե ինչու ես վազում. Պարզապես հաճույքի համա՞ր, քեզ ստիպե՞լ են, որ մասնակցես, թե՞ ուզում ես որևէ մեկին ուրախացնել:

Գուցե ճիշտ դրդապատճառներով ես մրցավազքի դուրս եկել, բայց վատնում ես ժամանակդ, քանի որ սխալ ուղղությամբ ես վազում և ոչ մի կերպ նպատակիդ չես մոտենում:

Հավատարիմները կվարձատրվեն (Գան. 12.3, Եփես. 6.8), և այդ վարձատրությունը հավիտենական կլինի (Ա Պետ. 5.4):

«Որովհետև մեր այժմյան թեթև նեղությունը ամենագերազանց հավիտենական փառքի մեծություն է գործում մեզ համար» (Բ Կորնթ. 4.17):

Հովիվ՝ Հովսեփ Հովսեփյան
Քաղված՝ «Աստծո արհեստանոցը» գրքից

Ձեռքս բռնի՛ր

Մուղիի գործակից Սենքին հետևյալ միջադեպը պատմեց իր կրթության տղայի մասին, երբ ձմռանը Շոտլանդիայում էին: Առաջին անգամ տղան գրպաններով մի վերարկու էր հագել: Նա քայլում էր իր հոր հետ լայրծուն ճանապարհով: Հայրն ասաց նրան.

- Տղա՛ս, լավ կլինի, որ ձեռքդ ինձ տաս:

Մակայն տղան ձեռքերը գրպանների մեջ դրած շարունակեց քայլել, մինչև որ սառույցի վրա ընկավ: Հասկացավ, որ հոր խրատը իմաստուն էր:

Այդ անկումը ինչ-որ կերպով տաշեց նրա հպարտությունը:

- Ես ձեռքդ կբռնեմ, - ասաց տղան՝ մեկնելով ձեռքը հորը:

Մի անգամ էլ սահեց ու չկարողանալով հոր ձեռքը ամուր բռնել, ևս մեկ անգամ ընկավ սառույցի վրա:

- Հայրի՛կ, հիմա դու կարող ես բռնել:

Հաջորդ օրը հոր գորավոր ձեռքը բռնել էր տղային, երբ քայլում էին լայրծուն տեղերով:

Երանելի է այն հավատացյալը, ով գիտի, որ Փրկչի հզոր ձեռքերում է, և Նա պատասխանատու է կրելու Իրենների, մինչև երկնային տուն ասպառով հասնելը:

Ինչպե՞ս դիմավորելու ենք քննադատությունները

Քրիստոնյան պետք է համբերությամբ դիմադրի իր հանդեպ եղած քննադատություններին:

Եթե աղքատ ես, ասելու են՝ ապուշ է:

Եթե հարուստ ես, ասելու են՝ խարդախությամբ է վաստակել:

Եթե եկեղեցի ես հաճախում, ասելու են՝ կեղծավոր է:

Եթե եկեղեցի չես հաճախում, ասելու են՝ մեղավոր է:

Եթե քաղաքականությամբ ես զբաղվում, ասելու են՝ շահագործող է:

Եթե քաղաքականությանը չես խառնվում, ասելու են՝ անպիտան քաղաքացի է և անարժան է իր հայրենիքին:

Եթե պատահի, որ երիտասարդ մահանաս, ասելու են՝ իր առջև փայլուն ապագա ուներ:

Եթե ծերության մեջ մահանաս, քննադատելու են՝ ասելով, թե ընտանիքի և ընկերության համար բռն էր:

Միակ մարդը, որ ուրիշներից երբեք չի քննադատվում, նա է, ով աշխարհ չի եկել:

Ահա մի քանի խորհուրդ այն մասին, թե ինչպես դիմագրավել ուրիշների քննադատություններին:

Աշխարհից լավը մի՛ սպասիր, սակայն միևնույն ժամանակ անկարևոր մի՛ համարիր ուրիշների քննադատությունները, այլ քննիր դրանք. գուցե դրանցից մի քանիսը տեղին են:

Արդյոք կա՞ որևէ մեկը, որ ապրել է մեր երկրագնդի վրա և այնքան է քննադատվել, որքան Հիսուս Քրիստոսը քննադատվեց: Որևէ մարդ չի ապրել սուրբ և անմեղ կյանք, ինչպես ապրեց միակ սուրբ և անմեղ Աստծո Չառնուկը, ով կարողացավ ասել. «Ո՞վ կարող է Ինձ մեղքի համար հանդիմանել»:

Այսուհանդերձ Նա աշխարհում ամենաքննադատված և զրպարտըված անձը եղավ: Սակայն ի՞նչ դիրք բռնեց այս բոլորի հանդեպ: Եսայի 53:7 համարը բացատրում է սա. «Նա անիրավություն կրեց և չարչարվեց, բայց իր բերանը չբացեց, մորթվելու տարվող գառնուկի պես, և ինչպես ոչխարը մունջ է իր խուզողների առաջ, այնպես իր բերանը չբացեց»: Ուշադրություն դարձրեք Հիսուսին, որ կանգնած էր Պիղատոսի առջև (Մարկ. 15.3-4):

Շահագործի՜ր ուրիշների քննադատությունները որպես միջոց՝ ինքը քեզ ուղղելու և շտկելու համար: Քո կեցվածքը թող միշտ քրիստոնեական լինի: Նայի՜ր Եզեկիա թագավորին և նրանից օրինակ վերցրո՛ւ (Եսայի 37:14): Նա նամակ էր ստացել մի կռապաշտ թագավորից, որ անարգում էր իրեն: Մեծ նեղության մեջ էր: Ի՞նչ արեց, երբ նամակը ստացավ. կարդաց, բացեց Աստծո առջև և աղոթեց: Սա է տեղը և միջոցը, ուր պետք է բերենք դժվարությունները: Հիսուս Քրիստոսը մեր փաստաբանն է՝ նստած Հայր Աստծո աջ կողմը: Թո՛ղ խնդիրներդ, ամեն բան հանձնի՜ր Նրան, որպեսզի Նա միջնորդի քեզ համար:

Մի՞թե հնարավոր է, որ ուրիշների զրպարտություններից և քննադատություններից օրհնություններ գան: Պետրոս առաքյալը վստահեցնում է մեզ. «Քանի որ գնահատելի է, եթե մարդ առ Աստված ունեցած իր խղճմտանքի պատճառով անիրավացիորեն տառապելով՝ կսկիծ կրի: Քանզի ի՞նչ գովեստի արժանի մի բան է, եթե մեղք գործած լինելով ծեծվեք և դիմանաք: Բայց եթե բարիք գործելու համար չարչարվեք և համբերությամբ տանեք, սա ընդունելի է Աստծուն, քանի որ դուք սրա համար եք կոչված, որովհետև Քրիստոսն էլ ձեզ համար չարչարվեց և մեզ Իր հետքերով ընթանալու օրինակ թողեց: Նա ոչ մի մեղք չգործեց և Նրա բերանում ոչ մի նենգություն չգտնվեց, նախատվեց, բայց փոխարենը չնախատեց, չարչարվեց, բայց չսպառնաց, այլ Իրեն հանձնեց Նրան, որ արդարությամբ է դատում» (Ա Պետ. 2.19-23): Հետևե՛նք Նրան, որ Իր կյանքով օրինակ թողեց մեզ, որպեսզի մենք էլ Իր շավիղներով քայլենք:

Ընտրված



Հավատք՝ Քրիստոսի հանդեպ, սեր՝ եղբայրների հանդեպ (1)

Եղբայրական սերը այն նշանն է, որով Քրիստոսի հետևորդները պետք է տարբերվեն մյուսներից, համաձայն Տեր Հիսուսի խոսքի. «Սրանով բոլոր մարդիկ պիտի իմանան, թե դուք իմ աշակերտներն եք, եթե դուք իրար համար սեր ունենաք» (Հովհ. 13.35):

Նշանը, որ Հիսուսի հետևորդները պետք է ունենան, ոչ թե ձուկն է, այլ սերը իրար հանդեպ: Քրիստոսին պատկանելու նշանը ոչ թե խաչն է, ոչ թե հագուստի որևէ կողի հետևելն է, ոչ թե որևէ խոսելաճոհ որդեգրելն է, այլ իրար հանդեպ սեր ունենալն է, անկեղծ, անշահախնդիր, ընդունող և զիջող սեր:

Այսպիսի սիրո գազաթնակետը իրար համար կյանքը դնելն է. Քրիստոսի փառքի համար մարտիրոսավեր առաջին դարի քրիստոնյաների համար սովորական երևույթ էր: «Սրանով մենք իմացանք սերը, որ Նա Իր կյանքը տվեց մեզ համար. մենք էլ պետք է մեր կյանքը տանք մեր եղբայրների համար» (Ա Հովհ. 3.16):

Հիմա կասեք, թե այն ժամանակ հալածանք կար, իսկ նեղության ժամանակ մարդիկ ընդունակ են այդպիսի քայլերի: Բայց ինչո՞ւ սպասենք հալածանքի, տառապանքի, որ մեր սերը միմյանց հանդեպ գործի դնենք:

Եթե սերը միմյանց հանդեպ գործի չենք դնում մեր կամքով, ապա մեր մեջ մեր կամքին հակառակ ինքնաբերաբար գործի է դրվում անտարբերությունը, հպարտությունը, չարախոսությունը, նախանձը և Ա Կորնթ. 13-րդ գլխում սիրո հատկանիշների հակառակ բնութագրերը:

Սաղմոս 73-ում Ասափն ասում է. «Քիչ էր մնացել, որ իմ ոտքերը շեղվեին ու իմ քայլերը սայթաքեին, քանի որ նախանձեցի անմիտներին, երբ տեսա ամբարիշտի բարգավաճումը»: Ի՞նչ կլինի, եթե անմիտ կամ ամբարիշտ բառի փոխարեն դենք եղբայր կամ քույր բառը. «Քիչ էր մնացել, որ իմ ոտքերը շեղվեին ու իմ քայլերը սայթաքեին,

քանի որ նախանձեցի եղբորս, երբ տեսա եղբորս բարգավաճումը, կամ հաջողությունը»:

Այո՛, մենք ամբարշտին չենք նախանձում, քանի որ գիտենք՝ նրա հարստությունը կրակի բաժին է, ցեցը ուտելու է, բայց նախանձում ենք եղբորը, ում Աստված օրհնում է, նախանձում ենք նրա հաջողությանը, ուրիշների հետ ունեցած հարաբերությանը, նրա կարողությանը, հոգևոր պարգևներին...:

Եթե նախանձում ենք, ուրեմն ժամանակին ընտրել ենք չսիրելը կամ անտարբեր գտնվելը եղբոր նկատմամբ: Ուստի մեր կամքին հակառակ, առանց գիտակցելու մեր մեջ սկսել է գործել երկրորդ համակարգը՝ նախանձը:

Նախանձում ենք եղբայրներին, երբ նրանք մեզանից լավն են, հպարտանում ենք, երբ մենք նրանցից լավն ենք: Սակայն սերը պետք է լինի մեզ մյուսներից զատորոշողը: Իսկ մենք փորձում ենք զատորոշվել՝ ցուցադրելով մեր հավատքի գերազանցությունը, մեր հավատքի ճշմարիտ լինելը...:

Հռոմի և մյուս հեթանոս մարդկանց չզարմացրեց մի խումբ քրիստոնյա նորահավատների հավատքը, որ կարողանում էին հավատալ Մեկին, ով մեռելներից հարություն էր առել, հավատալ, որ մահից հետո կյանք կա, որ մեռելների հարություն կա. դա նրանց չէր զարմացնում, քանի որ հեթանոսները հավատքի կողմից քրիստոնյաներին անցել էին, տարբեր չաստվածներ ունեին, տարբեր բաների էին հավատում: Նրանք զոհաբերության մեջ էլ գերազանցել էին քրիստոնյաներին. նույնիսկ իրենց զավակներին էին զոհում: Նրանց զարմացնողը ուրիշ բան էր. դա հավատքի հետևորդների եղբայրական սերն էր, միաբանությունը:

Ես նկատի չունեմ այն սերը, որ քրիստոնյան ունի Քրիստոսի հանդեպ (դա սրտում է, չի երևում), այլ այն սերը, որ քրիստոնյան ունի քրիստոնյայի հանդեպ: Նրանց զարմացնում էր այն, թե ինչպես էին նրանք իրար պինդ սրտով սիրում, ինչպես էին մեկը մյուսին օգնում, մետվում առյուծների երախների առաջ, որ մարտիրոսվեն, ինչպես իրար չէին դավաճանում, նույնիսկ կյանքի գնով:

Շատերը կասեն՝ այդպիսի եկեղեցի, այդպիսի եղբայրներ չկան, որ իրար այդպես սիրեն: Եթե հիմա չկան, դա չի նշանակում, թե չեն եղել, ոչ էլ նշանակում է, որ չեն կարող լինել: Աստծո Խոսքից՝ տարբեր եկեղեցիներին ուղղված նամակներից, մի քանի համար են ուզում ձեզ ներկայացնել, որպեսզի տեսնենք, որ իսկապես եղել են եկեղեցիներ, որոնց անդամներն իրար սիրել են, և եթե եղել են, ուրեմն այսօր էլ կարող են լինել...

- Կողոսիայի եկեղեցին. «Լսելով Հիսուս Քրիստոսի հանդեպ ունեցած ձեր հավատի և բոլոր սրբերի հանդեպ ձեր սիրո մասին» (Կող. 1:4):
- Եփեսացիների եկեղեցին. «Այդ պատճառով, ես էլ, Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ ունեցած ձեր հավատի և բոլոր սրբերի նկատմամբ ունեցած ձեր սիրո մասին լսելով...» (Եփես. 1:15):
- Փիլիպպեցիների եկեղեցին. «Եվ այս մասին եմ աղոթում, որ ձեր սերն ավելի ու ավելի առատանա գիտությամբ ու ամեն հասկացողությամբ» (Փիլիպ. 1:9):
- Թեսաղոնիկեցիների եկեղեցին. «...Պարտավոր ենք միշտ գոհանալ Աստծուց ձեզ համար, որովհետև ձեր հավատը խիստ աճում է, և ձեր սերը միմյանց նկատմամբ՝ ավելանում» (Բ Թես. 1:3):
- «Բայց եղբայրասիրության մասին հարկ չկա ձեզ որևէ բան գրել, որովհետև դուք ինքներդ Աստծուց սովորել եք միմյանց սիրել» (Ա Թես. 4:9):
- Նաև անհատներ, օրինակ՝ Գայոսը. «Սիրելի՛ս, դու հավատարմությամբ ես անում այն ամենը, ինչ անում ես եղբայրների և օտարների համար» (Գ. Հովհ. 5):

Վարդան Սարգիսյան

(Շարունակելի)



Երիտասարդը և նրա Սուրբ Գիրքը

Նյու Յորքում մի երիտասարդ աշխատանք էր փնտրում: Մի օր խանութ գնաց: Խանութպանը հարցրեց, թե ինչ է ուզում: Երիտասարդը պատասխանեց.

- Աշխատանք եմ փնտրում, արդյոք աշխատողի կարիք ունե՞ք:
- Ո՛չ, - ասաց խանութպանը:

Երիտասարդը իրեն ներկայացնելու համար ասաց.

- Պարո՛ն, ուսումնական լավ հաստատություններից վկայականներ ունեմ:

Երբ պայուսակը բացեց, որպեսզի թղթերը հանի, մի գիրք ընկավ գետնին: Երիտասարդը հարգանքով վերցրեց: Վաճառականը, ընկած գիրքը տեսնելով, հարցրեց.

- Ի՞նչ գիրք է դա:
- Սուրբ Գիրք է, պարո՛ն:
- Ի՞նչ ես անելու այդ Գրքով այստեղ՝ Նյու Յորքում, - հարցրեց խանութպանը:
- Ես մայրիկիս խոստացա, որ այս Սուրբ Գիրքը ամեն օր կարդալու եմ, և խոստումս պետք է կատարեմ:

Այդ ժամանակ վաճառականն ասաց.

- Ներս եկ, քեզ համար գործ ունեմ:

Շատ շանցած՝ նա դարձավ վաճառականի գործի բաժնեկիցը և բոլորի կողմից հարգված և հաջողակ վաճառական:

Սուրբ Գիրքը լավագույն վկայականն է այն սերտող անձի կյանքի համար: Խելացի վաճառականը լավ ընտրություն արեց, բայց լավագույն ընտրությունն արել էր այդ երիտասարդը, որ Սուրբ Գիրքը դարձրել էր իր ամենօրյա ընթերցանության նյութը: Որովհետև սա է «...Թե՛ ներկա, և թե՛ գալիք կյանքի խոստումն ունենալով» (Ա Տիմ. 4.8):